# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀայաստանիՀանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Ձ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00, meghri.syuniq@mta.gov.am

N Ե-1029
*03 օգոստոս 2021թ.*

**ՄԵԾ ՀԻՄՔ-1 ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Զաքարյան

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի կարիքների համար Ագարակ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի շենքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի արդյունքում «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանի միջև 27.04.2021թ. կնքվել է թիվ ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 պայմանագիրը, որի հիման վրա Ձեր կազմակերպությունը պարտավորվել է պայմանագիրը կնքելուց հետո երկու ամիս ժամկետում կատարել Հավելված 1-ում նշված աշխատանքները: 27.06.2021թ. կնքվել է Համաձայնագիր աշխատանքերի ժամանակը մեկ ամսով երկարացնելու նպատակով: Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում եթե պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը խախտվել է:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 4.2 և 5.1) համաձայն որակավորման ապահովման 2.4 կետի և պայմանագրի ապահովման 10.3 կետի կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվի «Այդիբանկ» ՓԲԸ ՀՀ ՖՆ գործառնական վարչության N900304000012 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի պատվիրատուն միակողմանի հրաժարվում է 2021 թվականի ապրիլի 27-ին կնքված ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 պայմանագրից՝ այն համարելով լուծված:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

*Կատ. Ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ՝ Շ. Սարգսյան*

Сканировано с CamScanner